

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՍՓԻՒ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Posted on July 10, 2021 by Keghart



ARMENIA AS IT WILL REAPPEAR ON THE MAP, ACCORDING TO THE TERMS OF THIS MEMORANDUM.
Area, about 125,000 square miles. Population, 4,300,000, divided approximately as follows: Armenians, 2,500,000; other Christians, 500,000; Turks, Circassians, Arabs, Persians, 500,000; Tartars, 300,000; Kurds, 200,000; other Religions, 300,000.

Category: [Opinions](#)



Արեւմտահայութեան գերագոյն ազգային խորհուրդի հիմնադիր մարմին, 6 Յունիս 2021

Հետեւելով տարածաշրջանի նեղ եւ ընդլայնուած շրջանակներէն ներս վերջին տարիներու աշխարհառագմավարական անցուդարձներուն, եւ համապատասխան գնահատանքներու հասնելով՝ Արեւմտահայութեան Ազգային Գերագոյն Խորհուրդի հիմնադիր մարմինը, յենուելով սոյն թուականի Ապրիլին իր որդեգրած ‘Արեւմտահայութեան Ազգային Հայեցակարգ’-ի ողջ բովանդակութեան վրայ՝ կը յայտարարէ.

1. Ազատ, անկախ եւ ինքնիշխան Արեւմտեան Հայաստանի վերականգնումէն առաջ, ‘Չանգեզուրի միջանցք’ կամ Հարաւային Կովկասէն մինչեւ Սեւ Ծով եւ Միջին Արեւելք երկարող տարածքներուն վրայ վերջնական որեւէ կարգավիճակ կամ ծրագիր գոյութիւն չի՛ կրնար ունենալ: Արեւմտահայութեան համար այս սկզբունքը ընդունուած է որպէս սրբազան ‘ՌԷԽՏ’:
2. Ի զուր եւ՝ Արեւելեան Հայաստանի վրայ գործող տարբեր կողմերու բոլոր ճնշումները, որոնց հիմնական նպատակն է վերջնական ուրացումը Արեւմտեան Հայաստանի գրաւեալ հողերուն, ու այդ հարցի անօրինական փակումը: Անկախ այն երեւոյթէն, որ Արեւելեան Հայաստանն ինքզինք անուանած է ‘Հայաստանի Հանրապետութիւն’՝ ան իրաւականօրէն ոչ իրաւայաջորդ, ոչ ալ շարունակող պետութիւնը կրնայ ըլլալ 19 Յունուար 1920-ին միջազգային ճանաչում ստացած ‘Հայաստան Պետութեան’: Այս փաստարկը հաստատուած է Արեւելահայաստանի 23 Օգոստոս 1990 թուականին ընդունուած անկախութեան հռչակագիրով, նաեւ, Արեւմտահայութեան կողմէ Արեւելեան Հայաստանին այդպիսի իրաւական լիազօրութիւն մը տալու բացակայութեան փաստով:
3. Հիմնուելով նախորդ կէտին վրայ, Արեւելահայաստանի վրայ գործող ներկայ այդ բոլոր ճնշումներուն հետեւանքով՝ Արեւելահայաստանին կողմէ ստորագրուած/ստորագրուելիք որեւէ համաձայնագիր, դաշնագիր կամ այլ որակի միջազգային պարտաւորութիւն՝ կը վերաբերին միայն ու միայն Արեւելեան Հայաստանին, եւ իրաւական ու քաղաքական ոչ մէկ ազդեցութիւն կամ հետեւանք կրնան թողուլ Արեւմտեան Հայաստանի եւ Արեւմտահայութեան միջազգայնօրէն փաստագրուած իրաւաքաղաքական եւ այլ իրաւունքներուն վրայ:
4. Միջազգային ընտանիքին, եւ յատկապէս գերիզօր հինգ պետութիւններուն պատասխանատուութիւնն է՝ վերջապէս որոշել, թէ այս երկրագունդին վրայ կը գործէ՞ միջազգային օրէնքը թէ ոչ: Եթէ կը գործէ՝ ապա ժամն է, որ վերջ դրուին Հայ ազգին նկատմամբ շարունակաբար գործող անօրէն ճնշումներուն ու անարդար եւ անտարբեր վերաբերմունքին: Ուստի եւ միջազգային երաշխիքով գործի դրուին անոր վերաբերող բոլոր իրաւունքները՝ ՄԱԿ-ի ներքին կանոնադրութեամբ ընդգծուած ու հաստատուած ‘Բոլորը բոլորին’ սկզբունքի գործնական իրականացումով: Այլապէս, Արեւմտահայութիւնը պիտի որդեգրէ համապատասխան այլընտրանքային գործելաճանաչում:

5. Ուիլսոնեան իրաւարար վճիռով սահմանուած ՀԱՅԿԱԿԱՆ գրաւեալ տարածքները օգտագործող որեւէ ծրագիր, եւ այդ ծրագիրին մէջ ընդգրկուած բոլոր պետութիւնները ենթակայ պիտի դառնան քաղաքական եւ տնտեսական՝ իրաւական պատասխանատուութեան:
6. Արցախի վերջնական կարգավիճակին վերաբերող որեւէ լուծում, որ հիմնուած չէ Սեւրի խաղաղութեան դաշնագրի 92-րդ յօդուածով սահմանուած դրոյթներուն՝ կը նկատուի անվաւեր, եւ միջազգային օրէնքի կոպիտ խախտում:
7. Միջազգային ընտանիքի ուշադրութեան կը յանձնենք, որ Արեւմտեան Հայաստանի՝ յատկապէս ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնի 22 Նոյեմբեր 1920-ի իրաւարար վճիռով սահմանուած տարածքները, ըստ Հաագայի (Լա Հէյ) 18 Հոկտեմբեր 1907-ի ցամաքային պատերազմի օրէնքներու 4-րդ պայմանադրութեան 3-րդ բաժնի 42-րդ յօդուածին, կը համարուին գրաւեալ տարածքներ, որոնց ազատագրութեան իրաւունքը երաշխաւորուած է միջազգային բոլոր օրէնքներով եւ չափանիշերով:
8. Արեւմտեան Հայաստանի գրաւեալ տարածքներուն համար ազատագրական պայքարը իւրաքանչիւր Արեւմտահայի թե՛ իրաւունքն է եւ թե՛ ալ պատասխանատուութիւնը: Հետեւաբար, կոչ կ'ուղղենք գրաւեալ տարածքներէն ներս ապրող եւ աշխարհասփիւռ տարագրեալ ողջ Արեւմտահայութեան՝ ստանձնելու իրենց ազգային պարտաւորութիւնը, թե՛ քաղաքական եւ թե՛ այլ միջոցներով ընթացող ազատագրական պայքարին, իւրաքանչիւրն իր կարողութեան եւ հնարաւորութեան սահմաններով:

There are no comments yet.